

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ՄԱՅԻՍՅԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ

2017-2021 ԹՎԱԿԱՆՆԵՐԻ

ԶԱՐԳԱՑՄԱՆ ԾՐԱԳԻՐ

Հապավումների ցանկ

ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՏԿԶՆ	Տարածքային կառավարման և զարգացման նախարարություն
ՏԿԱԻՆ	Տարածքային կառավարման և արտակարգ իրավիճակների նախարարություն
ԳՄՀԸ	Գերմանիայի Միջազգային համագործակցության ընկերություն
ԱՄՆ ՍԶԳ	Ամերիկայի Միացյալ Նահանգների Միջազգային զարգացման գործակալություն
ՀՖՍ ՀԿ	«Համայնքների ֆինանսիստների միավորում» հասարակական կազմակերպություն
ԲԲՀ	Բազմաբնակավայր համայնք
ՏԻ	Տեղական ինքնակառավարում
ՏԻՄ-եր	Տեղական ինքնակառավարման մարմիններ
ՄԺԾԾ	Միջնաժամկետ ծախսերի ծրագիր
ՄԶԾ	Մարզային զարգացման ծրագիր
ՏԶ	Տարածքային զարգացում
ՏԶԾ	Տարածքային զարգացման ծրագիր
ՀԶՀԾ	Համայնքի զարգացման հնգամյա ծրագիր
ՀԶՔԾ	Համայնքի զարգացման քառամյա ծրագիր
ՀՏԶՀ	Հայաստանի տարածքային զարգացման հիմնադրամ
ԽՄ	Խորհրդակցական մարմին
ԲԱԽ	Բնակավայրային աշխատանքային խումբ
ՀԿՏՀ	Համայնքի կառավարման տեղեկատվական համակարգ
ՈՒԹՀՎ	Ուժեղ կողմեր, թույլ կողմեր, հնարավորություններ, վտանգներ
ՔՀՄՀ	Քաղաքացիական հասարակության և մասնավոր հատվածներ

ՀՈԱԿ	Համայնքային չառն տրային կազմակերպություն
ՆՈՒՀ	Նախադպրոցական ուսումնական հաստատություն

Բովանդակություն

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք	9
2. Համայնքի իրավիճակի նկարագրություն	10
2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն	10
<i>Համայնքի հողային հաշվեկշիռը</i>	<i>16</i>
<i>ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ</i>	<i>18</i>
<i>Մշակույթ, սպորտ</i>	<i>20</i>
<i>Շրջակամիջավայրի պահպանություն</i>	<i>20</i>
2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը	22
1. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ 22	
ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ	29
3.	30
3.1. Համայնքում իրականացվող ծրագրերը	31
3.2. Համայնքի ֆինանսական իրավիճակի նկարագրություն և ֆինանսական կանխատեսումները Error! Bookmark not defined.	
3.3. Զարգացման խոչընդոտներ և դժվարություններ	Error! Bookmark not defined.
4. Նպատակների սահմանում և գործողությունների պլանավորում	Error! Bookmark not defined.
4.1. Համայնքի զարգացման տեսլական	Error! Bookmark not defined.
ՀԱՄԱՅՆՔԻ ՏԵՍԼԱԿԱՆԻ, ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՀԶԾ-Ի ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ	Error! Bookmark not defined.
4.2. Համայնքի զարգացման անմիջական նպատակներ	Error! Bookmark not defined.
5. ՀՀԶԾ ֆինանսավորում	Error! Bookmark not defined.
6. ՀՀԶԾ մոնիթորինգ	Error! Bookmark not defined.

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ Շիրակի մարզի Մայիսյան համայնքի 2017-2021 թթ. զարգացման ծրագիրը (այսուհետ՝ ՀԶՀԾ) մշակելիս հաշվի է առնվել, որ համաձայն 2015 թվականի դեկտեմբերի 6-ին փոփոխված ՀՀ Սահմանադրության 181-րդ հոդվածի, ՏԻՄ-երը՝ համայնքի ավագանին և համայնքի ղեկավարը, ընտրվում են հինգ տարի ժամկետով, և 210-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքը պետք է համապատասխանեցվի Սահմանադրությանը և ուժի մեջ մտնի 2017 թվականի հունվարի 1-ից: Հաշվի առնելով այդ պահանջները՝ մշակվել է համայնքի զարգացման ոչ թե քառամյա, այլ հնգամյա ծրագիր:

ՀԶՀԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով ներկայումս գործող «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքով սահմանված՝ ՏԻՄ-երի իրավասությունները, համայնքի ղեկավարի լիազորությունները նրա գործունեության բնագավառներում (ոլորտներում), ՀԶԲԾ-ի մշակման և կառավարման վերաբերյալ օրենքի 37-րդ, 38-րդ և 53-րդ հոդվածների դրույթները, ինչպես նաև ՀՖՄ ՀԿ փորձագետների կողմից մշակված և ՀՀ ՏԿԱԻՆ կողմից 2014 թվականին հավանության արժանացած՝ «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանությունը» (այսուհետ՝ Մեթոդաբանություն) և ԳՀՄԸ/ՀՖՄ ծրագրի շրջանակներում 2016 թվականին մշակված՝ «Բազմաբնակավայր համայնքում «Համայնքի զարգացման քառամյա ծրագրի մշակման և կառավարման մեթոդաբանության» կիրառման ուղեցույցը» (այսուհետ՝ Ուղեցույց):

ՀԶՀԾ-ն մշակելիս առանձնացվել և հաշվի են առնվել մեթոդաբանական հետևյալ չափանիշները՝

- համայնքի ֆինանսական կարողությունը.
- համայնքի բնակչության թվաքանակը.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերում առկա ենթակառուցյունները և մատուցվող հանրային ծառայությունները.
- համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի առանձնահատկությունները.
- համայնքում առկա վտանգները (ոխակերը):

ՀԶԾ-ի բովանդակությունը պայմանավորված է նաև ՀԶԾ-ի մշակմանը մասնակցած՝ համայնքի ԲԱԽ-երի կողմից կատարված աշխատանքով և առաջարկություններով, համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի ռեսուրսային (մարդկային, գույքային, ֆինանսատնտեսական, տեխնիկական և այլ) հնարավորություններով, համայնքային ծրագրերի իրականացման և ծառայությունների մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցների և ենթակառուցվածքների առկայությամբ, ինչպես նաև այն

իրողությամբ, որ համայնքը ձևավորվել է համայնքների խոշորացման պետական փորձական ծրագրի իրականացմամբ, գտնվում է ՀՀ կառավարության, միջազգային դոնոր և տեղական կազմակերպությունների ուշադրության կենտրոնում և, այս առումով, մեծացել է համայնքի զարգացմանը և առկա խնդիրների լուծմանը նրանց ներգրավելու հնարավորությունները: ՀԶԾ-ում հնարավորինս հաշվի են առնվել նաև համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հանրային ծառայությունների մատչելիությանը և հասանելիությանը, նոր ծառայությունների մատուցմանը վերաբերող և դրանցով պայմանավորված՝ լրացուցիչ ծախսեր առաջանալու խնդիրները, համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերը համաչափ զարգացնելու անհրաժեշտությունը, համայնքի տարածքում տնտեսական գործունեության խրախուսմանն ուղղված առկա հնարավորությունները, տնտեսության տարբեր ճյուղերի զարգացման (հատկապես՝ գյուղատնտեսության, փոքր և միջին բիզնեսի, տուրիզմի և այլնի) հնարավորությունները, համայնքի տարածքում պատշաճ կառավարման իրականացման անհրաժեշտությունը, ինչպես նաև համայնքում աղետի բազմաբնույթ վտանգները (ոհսկերը) և դրանց կառավարման միջոցառումները:

ՀԶԾ-ն մշակելիս ուսումնասիրվել է նաև Մայիսյան բազմաբնակավայր համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի՝ նախկին համայնքների նախորդ քառամյա ժամանակաշրջանի զարգացման ծրագրերը, միտումները և դրանց շարունակականության հնարավորությունները:

Համայնքի 2016-20թթ. ՀԶԾ-ն մշակվել է՝ հիմք ընդունելով համայնքի նորընտիր ղեկավարի և ավագանու անդամների նախընտրական ծրագրերի դրույթները և նպատակ հետապնդելով հետևողականորեն բարեփոխումներ իրականացնելու ճանապարհով աստիճանաբար լուծել համայնքում առկա հիմնախնդիրները և բարելավել համայնքի բնակչության սոցիալ-տնտեսական պայմանները:

ՀԶԾ-ն դիտարկելով որպես համայնքի ռազմավարական պլանավորման և մասնակցային կառավարման կարևորագույն միջոց, համայնքի ղեկավարին կից գործող ՀԶԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմինը՝ փաստաթուղթը մշակելիս, հատուկ ուշադրություն է դարձրել և ձգտել, որպեսզի այն հնարավորինս համահունչ լինի գործողության մեջ դրված ՀՀ ռազմավարական, մարզային և տարածաշրջանային զարգացման ծրագրերին՝ ակնկալելով ՀՀ պետական կառավարման մարմինների, ՔՀՄՀ կազմակերպությունների և շահագրգիռ այլ անձանց հետ լիակատար փոխըմբռնում ՀԶԾ-ում ներկայացված խնդիրների առնչությամբ և արդյունավետ համագործակցություն դրանց լուծման գործում:

ՀԶԾ-ի 1-ին բաժինը ներառում է՝ համայնքի սոցիալ-տնտեսական ընդհանուր, բնակավայրային և ոլորտային փաստացի իրավիճակի և համայնքի կողմից մատուցվող ծառայությունների բնութագրումը և վերլուծությունը՝ հաշվի առնելով ՀԶԾ-ի մշակման

մեթոդաբանական չափանիշների ազդեցությունը համայնքի ՏԻՄ-երի գործունեության ոլորտների կազմի վրա, համայնքում առկա սոցիալ-տնտեսական ենթակառուցվածքների ֆիզիկական վիճակի գնահատումը, դրանց շահագործման, պահպանման և նորոգման հետ կապված խնդիրները, համայնքի կազմում ընդգրկված բոլոր բնակավայրերում հիմնական ենթակառուցվածքների առկայության և ընդհանուր վիճակի, ինչպես նաև դրանց զարգացման հնարավորությունների, կարողությունների ու ռեսուրսների վերլուծումը և գնահատումը: Համայնքի ընդհանուր և ոլորտային կարիքների գնահատման հիման վրա, ըստ համայնքի կազմում ընդգրկված բնակավայրերի, կազմվել է համայնքում առկա հիմնախնդիրների ցանկը՝ առանձնացնելով նրանք, որոնց լուծումը նպատակահարմար է ներառել սույն ՀԶՀԾ-ում՝ ելնելով համայնքի ռեսուրսային հնարավորություններից: Բաժնում ներառվել է նաև համայնքի ՈԻԹՀՎ-վերլուծությունը՝ հիմնվելով համայնքի իրավիճակի վերլուծության ու գնահատման արդյունքների վրա և ձևակերպելով համայնքի ուժեղ և թույլ կողմերը, զարգացման ներքին ու արտաքին հիմնական հնարավորությունները, համայնքին սպառնացող հիմնական վտանգները:

ՀԶՀԾ-ի 2-րդ բաժինը ներառում է՝ համայնքի երկարաժամկետ տեսլականը, զարգացման ռազմավարությունը և սույն ՀԶՀԾ-ի հիմնական նպատակները:

ՀԶՀԾ-ի 3-րդ բաժինը ներառում է՝ պետության, միջազգային և տեղական, քաղաքացիական հասարակության, մասնավոր հատվածի և այլ կազմակերպությունների կողմից համայնքում գալիք հինգ տարիների համար նախատեսվող (շարունակվող) հանրապետական, մարզային, տարածաշրջանային, միջհամայնքային համագործակցության և այլ ծրագրերն ու միջոցառումները:

ՀԶՀԾ-ի 4-րդ բաժինը ներառում է՝ համայնքի ֆինանսական վիճակի վերլուծությունը, գնահատումը և կանխատեսումը՝ ըստ համայնքի բյուջեի եկամտային ուղղությունների (սեփական եկամուտներ, պաշտոնական դրամաշնորհներ, փոխառու միջոցներ)՝ դիտարկելով նախորդ երկու և գալիք հինգ տարիների եկամտային տվյալները:

ՀԶՀԾ-ի 5-րդ բաժինը ներառում է՝ ԲԱԽ-երի կողմից, ըստ բնակավայրերի, առաջարկված առաջնահերթ ոլորտային ծրագրերի ցանկը, ապա՝ համայնքի ղեկավարին կից գործող ՀԶՀԾ-ի և տարեկան բյուջեի կառավարման գծով խորհրդակցական մարմնի կողմից համայնքի զարգացման ոլորտային ծրագրերի ընտրությունը, դրանց առաջնահերթությունների սահմանումը՝ ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, բացահայտված կարիքներից ու հիմնախնդիրներից, ենթակառուցվածքների վիճակից և ՀԶՀԾ-ի հիմնական նպատակներից: Բաժնում ձևակերպվել և ամփոփվել են ՀԶՀԾ-ում ներառվող ոլորտային ծրագրերը՝ օգտագործելով դրանց կազմման՝ Մեթոդաբանությունում բերված օրինակելի ձևը, ինչպես նաև ներկայացնելով ծրագրերի ֆինանսավորման աղբյուրները (համայնքի բյուջե, ՀՀ պետական բյուջե, դոնոր կազմակերպություններ, այլ) և դրանց մոտավոր արժեքներն՝ ըստ գալիք հինգ տարիների:

Բաժնույն ներկայացվում են նաև ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առանձին բնակավայրերի և առաջիկա հինգ տարիների:

ՀԶՀԾ-ի 6-րդ բաժինը ներառում է՝ համայնքի սեփականություն համարվող շենքերի ու շինությունների, հողամասերի օտարման հնգամյա ծրագիրն՝ ըստ առանձին տարիների:

ՀԶՀԾ-ի 7-րդ բաժինը ներառում է՝ ՀԶՀԾ-ի իրականացման մշտադիտարկման (մոնիթորինգի) և գնահատման, տարեկան հաշվետվությունների կազմման և քննարկման ձևաչափերը:

ՀԶՀԾ-ի եզրափակումը ներառում է՝ համառոտ մոտեցումներ և դրույթներ՝ ՀԶՀԾ-ում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարման, քննարկման և հաստատման գործընթացների վերաբերյալ:

ՀԶՀԾ-ի հավելվածները ներառում են՝

- համայնքապետարանի աշխատակազմի կառավարման կազմակերպական կառուցվածքը,
- համայնքի սեփականություն համարվող գույքի ցանկը և վիճակը՝ ըստ առանձին բնակավայրերի, համայնքի բնակավայրերում սոցիալ-տնտեսական հիմնական ենթակառուցվածքների առկայությունը և ընդհանուր վիճակը,
- համայնքի հողային հաշվեկշիռը՝ ըստ առանձին բնակավայրերի,
- համայնքում առկա անասնազվաքանակի տվյալներն՝ ըստ առանձին բնակավայրերի,
- համայնքի հիմնական ցուցանիշների գնահատումը և կանխատեսումը,
- համայնքի 2016-2020 թթ. ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերի ձևակերպումներն՝ ըստ դրանց օրինակելի ձևի,
- համայնքի 2016-2020 թթ. ՀԶՀԾ-ում ներառված ոլորտային ծրագրերն՝ ըստ առանձին բնակավայրերի:

1. Համայնքի ղեկավարի ողջույնի խոսք

Շիրակի մարզի Մայիսյանի համայնքի հնգամյա ծրագիրը կազմվել է համայնքի խնդիրները հաշվի առնելով և դրանց լուծումներ առաջարկելով:

Համայնքապետարանի աշխատակազմը բնակիչների համար հնաավոր ամեն ինչ կանի մեր համայնքի սոցիալ-կենցաղային պայմաններ բարելավելու, համայնքն ավելի բարեկարգ և հաճելի տեսնելու

2017-21 թվականների հնգամյա ծրագիրը հանդիսանում է համայնքապետարանի ոչ թե գործավարության փաստաթուղթ, այլ համայնքի ազգաբնակչության աջալուրջ ուշադրության տակ գտնվող հեռանկարային փաստաթուղթ:

2. Համայնքի իրավիճակի նկարագրություն

2.1. Համայնքի ընդհանուր նկարագրություն

ՀԱՍՏԱՅՆՔԻ ԱՇԽԱՐՀԱԳՐԱԿԱՆ ԴԻՐՔԸ, ՌԵԼԻԵՖԸ

Մայիսյան գյուղը գտնվում է Շիրակի մարզում, Գյումրի քաղաքի հյուսիսային մասում՝ 1 կմ հեռավորության վրա: Գյուղը սահմանակից է հինգ այլ գյուղերի և Գյումրի քաղաքի վարչական տարածքին: Այստեղով է անցնում Գյումրի-Աշոցք-Վրաստան կենտրոնական ճանապարհը և Երևան-Թբիլիսի երկաթգիծը: Ինչպես կենտրոնական ճանապարհը, այնպես էլ երկաթուղին հնարավորություն են տալիս համայնքի անդամներին կապ ապահովելու ինչպես հարևան հանրապետության, այնպես էլ հանրապետության այլ բնակավայրերի հետ: Գյուղի մոտով է անցնում Շիր-կանալը, որը հնարավորություն է տալիս լիարժեք ոռոգելու համայնքի պատկանող հողատարածությունները:

Գյուղը ծովի մակարդակից բարձր է 1640 մ, վարչական տարածքը կազմում է 1673.9 հեկտար, որից գյուղի բնակատեղը շուրջ 450 հեկտար: Գյուղի աշխարհագրական դիրքը նախալեռնային է, կլիմայական պայմանները, ելնելով տվյալ տարածքից լինում է բարենպաստ և անբարենպաստ: Տարվա եղանակներից անհամեմատ լավ է աշունը, ձմեռը երբեմն խստաշունչ է լինում, իսկ ամառը տաք է հաճախակի քամիներով: Տարեկան տեղումները քիչ են, ձմեռը քիչ է ձյուն գալիս: Վերջին տարիներին հաճախակի է լինում երաշտ և կարկտահարություն: Գյուղը գտնվում է սեյսմիկ գոտում, հաճախակի են լինում երկրաշարժերը:

ՊԱՏՄԱԿԱՆ ԱԿՆԱՐԿ

Գյուղը հիմնադրվել է VII դարում: Նախկին անվամբ եղել է Շարաթիլ (Շարայի գյուղ): Այն ունի արաբական ծագում, քանի որ 652 թվականին դամասկոսյան դաշնագրի համաձայն Հայաստանը ենթարկվել է արաբական խալիֆայությանը: 1045թվականին Ախուրյանն անցնում է սելջուկ թուրքերի տիրապետության տակ և Շարաթիլը վերանվանվում է Օրթաքիլիսա /Կենտրոնական եկեղեցի/ թուրքաձին անունով՝ քանի որ VII դարում գյուղի կենտրոնում է կառուցվել Ներսես Տայեցու կողմից կառուցված Չվարթնոց տաճարի հասակակից Տիրանավոր սուրբ Աստվածածին եկեղեցին: Օրթաքիլիսա անունով հանդես է եկել գյուղը 1805 թվականին, երբ Հայաստանը միացվել է Ռուսաստանին, և դրանից հետո մինչև 1920թվականը: Ի պատիվ 1918 թվականի մայիսյան արստամբության, 1920 թվականին Օրթաքիլիսան վերանվանվել է Մայիսյան:

Տիրանավոր սուրբ Աստվածածին եկեղեցին հետագայում վերանորոգվել է 1880 թվականին, իսկ վերջին անգամ 1987-1988 թվականին, սակայն 1988 երկրաշարժի պատճառով, այն զգալի չափով վնասվեց, որից հետո այն վերանորոգվեց 1989 թ-ին:

1907թվականին Օրթաքիլիսայում գործել է մասնավոր-ծիսական դպրոց՝ Վարոս անունով հարուստի տանը: Այն տեղակայված է եղել գյուղի հարավ-արևելյան մասում, մշեցի Ղազար Մխիթարյանի տան հարևանությամբ: Այն հարուստի երեխաների համար էր հասու: Այս դպրոցում ուսուցչություն են արել Վերան, Ասյան, իսկ առաջին սաներն են եղել Զավեն Ավետիսյանը, Արամ Զինիստյանը, Ալեքսան Թումասյանը, Տոնիկ Թումասյանը, Ավետիք Տերտերյանը:

Երբեմնի արտադրական և մշակութային հարուստ կյանքով ապրող գյուղը 1988թ. երկրաշարժի պատճառով կորցրեց մշակույթի, առողջապահության ու սոցիալ-տնտեսական նշանակության օբյեկտները, փլվեցին ու վթարային դարձան մի քանի տասնյակ բնակարաններ:

Սակայն երկրաշաժը չկարողացավ ընկճել աշխատասեր ու կամքով օժտված մայիսյանցունու նա արդեն 25 տարի է նվիրումով վերականգնում է իր ծննդավայրը: Գյուղը կամաց-կամաց կառուցապատվում ու բարեկարգվում է:

Գյուղն ունի տիպային միջնակարգ դպրոց՝ 1 հատ, մանկապարտեզ՝ 1 հատ և բուժամբույատորիա՝ 1 հատ: Գյուղում գործում է փոստային բաժանմունք, գրադարան: Գյուղում կա 150 քաղաքային համարով հեռախոս, գործում են բջջայինբոլոր օպերատորները, առկա են ինտերնետի տրամադրման համար ժամանակակից բոլոր տեխնոլոգիաները:

ԺՈՂՈՎՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղի հիմնական 2016 հունվարի 1-ի տվյալներով (493 ծուխ), որից՝

Բնակչությունը	1976
Տղամարդ	1008
Կին	968
Նախադպրոցական (0-6տ)	118
Դպրոցական (6-18տ)	238
18-62 տարեկան	1236
63 տարեկանից բարձր	205
Ընտրողների թիվը	1252
Կենսաթոշակառուներ	241
ՀՄՊ մասնակիցներ	1
Զոհված ազատամարտիկներ	1
Բռնադատվածներ	1
«Փարոս» ծրագրով ընդգրկված	270 ընտ.
Աշխատունակ բնակչության թիվը	1060
Ժամանակավոր բնակչության թիվը	280

Մոտ 120-130 մարդ մեկնում է արտագնա աշխատանքների: Գյուղում զգալի թիվ է կազմում արտերկրներ մեկնողընտանիքների թիվը, որը կազմում է 98, որը հետևանք է նյութական վատ պայմանների և աշխատատեղի պակասի:
Այս երևույթների կասեցման, ինչպես նաև մյուս հիմնախնդիրների հախթահարման համար անհրաժեշտ է գյուղում զարգացնել անասնապահությունը և հողագործությունը, ստեղծել կայուն աշխատատեղեր:


ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՍԱՐՄԻՆՆԵՐԸ

2016 թվականի հոկտեմբերի 26-ին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններում Մայիսյանի համայնքի ղեկավար է վերընտրվել Հակոբ Գազիկի Բաղդասարյանը, ծնված 1981թ, ունի բարձրագույն կրթություն: Համայնքի ղեկավարի աշխատակազմում աշխատում է 8 մարդ: Համայնքապետարանի ենթակա հիմնարկ ձեռնարկություններում աշխատում է 7 մարդ:

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Ընդամենը (դրամ)
1	Համայնքի ղեկավարի տեղակալ	1	120000	1	120000	120000
2	Աշխատակազմի քարտուղար	1	174000	1	174000	174000
3	Առաջատար մասնագետ	1	150000	1	150000	150000
4	Առաջին կարգի մասնագետ	1	120000	1	120000	120000
5	Համակարգչի օպերատոր	1	110000	1	110000	110000
6	Գանձապահ	1	72752	0.5	36376	36376
7	Գրադարանավար	1	72752	1	72752	72752
8	Գործավար	1	77904	1	77904	77904
9	Հավաքարար	2	72752	2	145504	145504
10	Կազմակերպիչ	1	77904	1	77904	77904
Ընդամենը		11	1048064	10.5	1084440	1084440

Հ/հ	Պաշտոնի անվանումը	Հաստիքի քանակը	Պաշտոնային դրույքաչափը (դրամ)	Սահմանված դրույքը	Սահմանված դրույքաչափը (դրամ)	Ընդամենը (դրամ)
1	Տնօրեն	1	110000	1	110000	110000
2	Դաստիարակ	1	89286	1.12	100000	100000
3	Հաշվապահ	1	72752	1	72752	72752
4	Խոհարար	1	72752	1	72752	72752
5	Դաստիարակի օգնական-հավաքարար	1	72752	1	72752	72752
6	Բակապահ	1	77904	1	77904	77904

7	Բուժքույր	1	72752	1	72752	72752
Ընդամենը		7	568198	7	578912	578912



Համայնքի ավագանին բաղկացած է 7 անդամից:

Հ/Հ	Ազգանուն, անուն	Զբաղվածու- թյունը	Կրթությունը	Կուսակցակա- նությունը.
1.	Դուկասյան Առաքել	հողագործ	բարձրագույն	անկուս.
2.	Իսրայելյան Կարեն	գործարար	բարձրագույն	անկուս.
3.	Մովսիսյան Արշակ	հողագործ	Միջնակարգ	անկուս.
4.	Սերոբյան Քերոբ	ֆերմեր	բարձրագույն	անկուս.
5.	Պետրոսյան Հմմա	մանկավարժ	բարձրագույն	անկուս.
6.	Պապոյան Ռոբերտ	հողագործ	Միջնակարգ	անկուս.
7.	Գևորգյան Արտյոմ	հողագործ	Միջնակարգ	անկուս.

ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ

ԳՈՒՅՔԻ ՑԱՆԿ

Հ/Հ	Անվանումը	Միավորը	Ֆիզիկական վիճակը	Ծանոթություն
	Մանկապարտեզ	1	բավարար	վերանառոգման ենթակա
	Արվեստի դպրոց	1	կիսաքանդ	տնակ, քանդման եթակա
	Սշակույթի տուն	1	նորակառույց	
	Գյուղամիջյան կամուրջ	2	բավարար	վերանորոգման ենթակա
	Ավտոմեքենա	5	մաշված	Դուրսգրման ենթակա - 4
	Տրակտոր	9	մաշված	Դուրսգրման ենթակա - 7
	Գյուղգործիքներ	10	մաշված	Դուրսգրման ենթակա - 10
	Հացահատիկի կոմբայն	3	մաշված	Դուրսգրման ենթակա
	Խոտհնձիչ	1	մաշված	Դուրսգրման ենթակա
	Կցասայակ	6	մաշված	Դուրսգրման ենթակա
	Խմելու ջրի ներքին ցանց	20 կմ	մաշված	Ժամկետանց
	Ոռոգման ջրի ցանց	22 կմ	բավարար	ընդարձակման ենթակա
	Գյուղամիջյան ճանապարհ	19 կմ	քանդված	վերանառոգման ենթակա
	Գերեզմանատուն	1	նորմալ	

Համայնքի հողային հաշվեկշիռը

1. Գյուղատնտեսական նշանակության հողեր 1494.58 հա, որից վարելահող 1008.44 հա,
2. խոտհարք 0 հա, արոտ 396.14 հա և այլ հողեր 90.0 հա:
2. Բնակավայրի հողեր 124.14 հա, որից տնամերձ 87.46 հա:
3. Արդյունաբերության, ընդերքօգտագործման և այլ արտադրական նշանակության հողեր 221.09 հա:
4. Էներգետիկայի, կապի, տրանսպորտի և կոմունալ ենթակառուցվածքների օբյեկտների հողեր 74.80 հա:
5. Հատուկ պահպանվող տարածքների հողեր 3.83 հա:
6. Հատուկ նշանակության հողեր 136.01 հա:
7. Անտառային հողեր 0 հա:
8. Ջրային հողեր 8.28 հա:
9. Պահուստային հողեր 0.00 հա:
- Քաղաքացիների սեփականության հողեր 833.21 հա:
- Իրավաբանական անձանց հողեր 0.85 հա:
- Համայնքային սեփականության 765.94 հա:
- Պետական սեփականության հողեր 438.23 հա:

Համայնքի կոմունիկացիոն կառույցների նկարագիրը

Համայնքի կոմունալ տնտեսությունում բացի խմելու ջրի արտաքին և ներքին ցանցից կա նաև գործող կոյուղու ցանց 2.5 կմ երկարությամբ: Կարևոր հարցերից նաև գյուղի այն բնակարանների գազաֆիկացումը, որոնք այժմ գազաֆիկացված չեն: Դա գյուղի մոտ 20 % է:

Գյուղում կա 2.5 կմ ասֆալտապատ ճանապարհ, համայնքի տարածքի սանմաքրումը կատարվում է գյուղապետարանի և ազգաբնակչության կողմից շաբաթօրյակների միջոցով:

Հ/Հ	Անվանումը	Հաստատված միավոր	Քանակ	Կատարման թվական	Ենթակա է վերանորոգման	Վերանորոգված	Նոր կառուցված	Ծանոթություն
1.	Կամուրջներ	հատ	2	1970	2			
2.	Ներհամայնքային ճանապարհներ	կմ	19	1991	19	2008	0	ընթացիկ խնամապատում
3.	Խմելու ջրի ՕԿՁ	հատ	0	0	0	0		
4.	Խմելու ջրի ներտնտես. ցանց	զծմ	20.000	1950 1991	15.000	0		
5.	Ոռոգման ներտնտեսային ցանց	զծմ	22.000	1924 2000	3600	2000	0	
	Փակ ջրագիծ	զծմ	1.000	1960	0	0		
	Բաց ջրագիծ	զծմ	19.000	1950 1991	3600	0		
6.	Տնային հեռախոսակապ	հատ	150	2008				

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆԸ

ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղը երկրաշարժի ժամանակ 70% վնաս է կրել, առաջնահերթ կարիք ունի, սպորտհամալիրի, հանդիսությունների սրահի, կապի հանգույցի շենքի, բնակարանաշինության, խմելու ջրի ներքին ցանցի որոշ մասի վերանորոգման, ինչպես նաև փողոցների բարեկարգման և կանաչապատման, երկաթուղային ևավտոբուսային կանգառների: Համայնքի գերեզմանոցը կարիք ունի պարսպապատման և գիշերային լուսավորվածության, սպասարկող անձնակազմի: Մասնակի վերանորոգման կարիք ունի համայնքի նախակրթարանը, միջնակարգ դպրոցը, մշակույթի տունը:

Բնակարանային տնտեսություն

Համայնքի բնակելի ֆոնդը կազմում է 395 առանձնատուն, որից 392-ը սեփականաշնորհված տներ են: Սակայն դեռ 65 ընտանիք կարիք ունեն բնակարանի, 27 տների շինարարությունը գտնվում է տարբեր աստիճանի անավարտ վաճակում, 14 ընտանիք ունեն երկրաշարժից անօթևանի կարգավիճակ:

Գյուղատնտեսություն

Համայնքի գյուղացիական տնտեսությունները հիմնականում մշակում են հացահատիկային մշակաբույսեր, խոտ, կարտոֆիլ, բանջարեղեն, առվույտ, կորնզան, սեղանի ճակնդեղ, գազար, կանաչիներ:

Մայիսյանի համայնքում սեփականաշնորհված հողամասի մեկ չափաբաժինը կազմում է 0.8 հա, որից 0.12 հա տնամեձ հողամասն է և 0.68 հա վարելահողը:

Ջրովի հողատարածքները մշակվում են գրեթե ամբողջությամբ: Վերջին տարիներին նկատվում է անասնազխաքանակի դինամիկ նվազեցում: Սակայն թե հողագործության և թե անասնապահության բնագավառներում գերակշռում է էքստենսիվ զարգացումը, ինչի հետևանքով համայնքի բնակչության եկամուտները գրեթե չեն ավելանում:

Նախատեսվում է վերաբացել հողերի ագրոքիմիական անալիզների լաբորատորիա, որը հնարավորություն կտա բնակչությանը իրենց հողերի կառուցվածքը ճշգրիտ պատկերացնել:

Համայնքը ապահովված չէ նոր գյուղատնտեսական տեխնիկայի, մեքենաների, գործիքների ու հացահատիկահավաք կոմբայնների անհրաժեշտ քանակությամբ, որը հնարավորություն կտար հողը ցանել, մշակել ու բերքահավաքը կազմակերպել արդյունավետ ու ժամանակին:

Անասնապահությունը զարգացնելու համար անհրաժեշտ է համայնք ներմուծել ավելի կաթնատու և մսատու անասնատրտեր:

Կարտոֆիլագործության բնակավառում պետք է ներմուծել այնպիսի բերքատու սորտեր, որոնք կապահովեն 250-300 գ. բերք:

Բերքատվության բարձրացման համար կարելի է ներմուծել հանքային և օրգանական պարարտանյութեր:

Մյուս հիմնախնդիրը՝ գյուղատնտեսական և անասնապահական մթերքների իրացման հարցն է, որը գյուղացու համար միշտ հուզող է եղել: Ցանկալի և անհրաժեշտ է գյուղում ունենալ գյուղմթերքների վերամշակման ձեռնարկություններ, որոնք կստեղծեն նաև նոր աշխատատեղեր:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Գյուղի մոտ 120 մարդ աշխատում է համայնքի վարչական տարածքի և Գյումրի քաղաքի հիմնարկ-ձեռնարկություններում:

Գյուղի վարչական տարածքում գտնվում է՝

1. Հայ-ամերիկյան տնաշինական կոմբինատը, որը գյուղի համար ապահովում է 5 աշխատատեղ:
2. Մեխանիկական վերանորոգման գործարանը, որը 2016 թվականից չի աշխատում
3. Ալրադացը և հացի փուռը , որը գյուղի համար ապահովում է 6 աշխատատեղ:
4. Նախկին ջերմոցային տնտեսությունը ենթարկվում բնական ավիրման:
5. մի քանի գյուղեր սպասարկող էլեկտրակայանը, որը գյուղի համար ապահովում է 3 աշխատատեղ:
6. Գյուղի վարչական տարածքում կա և տուֆի հանք, որը 2016 թվականից չի աշխատում:
7. Փոքր հիդրոէլեկտրակայան և կառուցվող փոքր հողմաէլեկտրակայան:

ԿԵՆՑԱԴ-ՍՊԱՍԱՐԿՈՒՄ

Գյուղում գործում է 2 փոքրիկ առևտրի սեփական օբյեկտ, 2 հասարակական սննդի օբյեկտ: Ամառ ժամանակը, որոշակի չափով առևտուր է իրականացվում ավտոմեքենաներով, շրջիկ ձևերով:

ԿՐԹՈՒԹՅՈՒՆ

Գյուղում գործում է 1 միջնակարգ դպրոց, որտեղ սովորում են 138 աշակերտ: Դպրոցը տեղակայված է տիպային շենքում: Դպրոցում աշխատում են 27 մանկավարժ, որից 8-ը Մայիսյանի համայնքի բնակիչներ են: Ինչպես նաև Մայիսյանի համայնքի բնակիչներ են դպրոցի տեխնիկական անձնակազմը՝ 7 մարդ: Դպրոցը ջեռուցվում է լոկալ ջեռուցման համակարգով: Դպրոցի մարզադահլիճը ունի խիստ վերանորոգման կարիք:

1996թ.-ից գյուղում վերաբացվել է նախակրթարանը, որտեղ տարեկան հաճախում են 22 երեխա: Նախակրթարանը գործում է համայնքապետարանի ֆինանսավորմամբ: Նախակրթարանն ունի 7 աշխատակից, բոլորն էլ Մայիսյանի համայնքի բնակիչներ են: Նախակրթարանը տեղակայված է տիպային շենքում, ջեռուցվում է գազով:

Կրթական երկու հիմնարկներում էլ առկա են կոմունալ բոլոր հարմարությունները:

Մշակույթ, սպորտ

Մշակութային կյանքը մինչ երկրաշարժը նույնպես զարգացած է եղել: Գյուղը տվել է հայ ժողովրդին այնպիսի նկարիչներ, ինչպիսին են Աշոտ Հովհաննիսյան (Դեղձ) և Վալերա Ափինյան:

Գյուղում գործում է գրադարան, որն ունի շուրջ 6500 գիրք, տարեկան 150-ից 200 հաճախումներով ինչպես նաև գտնվելով մշակույթի տանը ունի ընթերցելու բոլոր հարմարությունները: Գրքային ֆոնդն ունի համարման կարիք, հատկապես ժամանակակից տեխնիկական և դասական գեղարվեստական գրքերով:

Համայնքի մարզական կյանքը նույնպես պասսիվ է, կա նորաստեղծ փոքր բացօթյա մարզադաշտը պրոցի տաածքում: Որոշ երեխաներ սպորտի են հաճախում Գյումրի: Դիմել ենք վերադաս կազմակերպություններին և կառավարություն համայնքում գտնվող քիմլաբորատորայի նախկին շենքը համայնքային մարզամշակութային կենտրոն դարձնելու համար:

Ունենք մշակույթ տուն, որտեղ գործում են պարի, անգլերենի ուսուցման խմբակներ, համակարգչային կենտրոն ինտերնետ հասանելիությամբ, կազմակերպվում են բազմապիսի միջոցառումներ, մեծ ջեռուցվող 280 տեղանոց դահլիճ բեմով և բոլոր հարմարություններով

Առողջապահություն

Մինչև 1968թ. գյուղում գործել է ստացիոնար հիվանդանոց և բուժամբուլատորիա: Երկրաշարժին բուժամբուլատորիան փլվել էր: Այժմ այն գործում է և տեղակայված է տիպային և ժամանակակից կառույցում, բարենորոգված, ջրովևկոյուղովապահովված, ունի շտապ-օգնության մեքենա: Սպասարկում է նաև շրջակա գյուղերը: Ունի 5 բուժ աշխատող:

Ներդրվել է ընտանեկան բժշկի համակարգ: Ժամանակին իրականացվում են մանկահասակ երեխաների պարտադիր բուժ միջոցառումները: Բուժ աշխատողների կողմից ամենօրյա հսկողության տակ են նորածին երեխաները:

Շրջակամիջավայրի պահպանություն

1988 թ. երկրաշարժից հետո, Գյումրի քաղաքից ու Ախուրյանի նախկին շրջկենտրոնից մեծ քանակությամբ փլատակների աղբ է տեղափոխվել համայնքի տարածք՝ անօգտագործելի դարձնելով 18 հեկտարից ավելի արոտ: Այն անհրաժեշտ է հարթեցնել:

Յուրաքանչյուր տարի աղբահա-նության համար համայնքային բյուջեում նախատեսվում է գումար աղբահանության համար:

Բնակչության ուժերով ամեն տարի կազմակերպվում է սելավա-տարերի մաքրումը բնական և կենցաղային աղբից:

Շինարարական աղբի համար տեղ է նախատեսվել վարչատարածքում գտնվող քարհանքի անօգտագործելի տարածությունները:

Կազմակերպվում է ամենամյա աղբահանություն, սակայն դեռևս շատ կան օրինախախտման դեպքեր (անհարգի միջավայր կեղտոտողներ, նույնիսկ մեքենաներով Գյումրիից):

ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆԸ

Համայնքապետարանում տեղադրված են տեղեկատվական ցուցատախտակներ, որոնց միջոցով ապահովվում է համայնքի ղեկավարի եւ ավագանու կայացրած որոշումների հրապարակայնությունը:

- ✓ 18.05.2016թ. N 13-Նորոշմամբ հաստատել է «Համայնքի ղեկավարին կից խորհրդակցական մարմինների ձևավորման և գործունեության կարգը»
- ✓ 18.05.2016թ. N 14-Նորոշմամբ հաստատել է «Համայնքում տեղական ինքնակառավարմանը բնակիչների մասնակցության կարգը»:
- ✓ 18.05.2016թ. N 15-Նորոշմամբ հաստատել է «Համայնքում հանրային բաց լսումների և (կամ) քննարկումների կազմակերպման և անցկացման կարգը»

ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Արտակարգ իրավիճակների առաջացման դեպքում քաղաքացիական պաշտպանության կազմակերպումը, կառավարումը հանդիսանում է համայնքային իշխանության կողմից պարտադիր կատարվող գործառույթ:

Համայնքային իշխանության ենթակառուցվածքներին երգրավմանը զուգահեռ, Քաղպաշտպանության շտաբի մեջ ներառված ծառայությունները ներկայացնում են համայնքային այլ պատկանելիության, մասնավոր հատվածի միջարք կազմակերպություններ (կապի, տրանսպորտի, բժշկական, սանիտարա-հիգիենիկ ծառայությունների և այլ լորտներից), առանց որոնց անհնար է քաղպաշտպանության շտաբի ֆունկցիոնալ գործունեության արդյունավետ ապահովումը:

Մայիսյան ի համայնքի քաղպաշտպանության շտաբի պետի պաշտոնե համարվում է համայնքապետը, որի անմիջական հանձնարարությամբ գործում են քաղպաշտպանության շտաբի առանձին ծառայությունները՝ ծառայությունների պետերի համակարգմամբ:

Արտակարգ իրավիճակներում փրկարարական աշխատանքների իրականացան գործում բնակչության էվակուացման համար մշակված է պլան, համապատասխանորի, բնակելի, հասարակական շենքերի, մյուս շենքերի ու շինությունների համար նախատեսված է հարմարավետ մոտեցումներով աշխատանքների տարման կոմունիկացիոն սխեմաներ:

Բնակավայրերում եղած թափոցները հաճվաճ են համայնքապետարանի կողմից: Անհրաժեշտություն կաթաթափոցները ավելացնել բնակչության թվին համապատասխան:

1.1 ՀԱՄԱՅՆՔԻ ԳՈՐԾԱՐԱՐ ՄԻՋԱՎԱՅՐԸ

Համայնքի գործարար միջավայրի ձևավորումն ապահովող և հետագայում այդ միջավայրը զարգացնող կազմակերպությունների մասին տեղեկատվությունը ներկայացված է ԱՌԵՎՏՈՒՐ ԵՎ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ Բաժնում:

Համայնքի իրավիճակի բնութագրման և գնահատման ընդհանուր և ոլորտային հիմնական ցուցանիշները ներկայացված են հավելված 1-ում:

2.2. Համայնքի սոցիալ տնտեսական իրավիճակը

1. ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԻՐԱՎԻՃԱԿԻ ՎԵՐԼՈՒԾՈՒՄ, ԳՆԱՀԱՏՈՒՄ ԵՎ ԿԱՆԽԱՏԵՍՈՒՄ

Համայնքի բյուջեի մուտքերը, կարելի է ասել, ձևավորվում են բացառապես վարչական բյուջեի միջոցների հաշվին: Համայնքում գալիք հինգ տարիներից միայն 2018թ. է նախատեսվում ոչ ֆինանսական ակտիվների իրացումից մուտքերի ստացում, այն էլ փոքր գումարի չափով:

Վարչական բյուջեի եկամուտները ձևավորվում են սահմանափակ թվով եկամտատեսակների՝ հարկերի, տեղական տուրքերի և գույքի վարձակալությունից եկամուտների հաշվին: Համայնքի բյուջեի կանխատեսվող եկամուտների մեծ մասը (2016թ.՝ 75.7%, 2017թ.՝ 75.7%, 2018թ.՝ 75.6%, 2019թ.՝ 75.5%, 2020թ.՝ 75.5%,) ձևավորվում են պետական բյուջեից համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման նոտացիաների հաշվին:

Քանի որ համայնքի բյուջեի ֆոնդային մասում մուտքեր գրեթե չեն կանխատեսվում, ապա պլանավորվող հինգ տարիների կապիտալ ծախսերը մեծամասամբ կիրականացվեն համայնքի բյուջեի վարչական մասի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումների և տարեսկզբի ազատ մնացորդի հաշվին:

Աղյուսակ . Համայնքի 2016թթ. բյուջեի մուտքերի ցուցանիշները և 2017-2021թթ. բյուջեների մուտքերի կանխատեսումը հազար դրամ

Եկամտատեսակները	2016	2017	2018	2019	2020	2021
2	4	4	4	4	4	4
ԸՆԴԱՄՆԵԸ ԵՎԱՍՈՒՏՆԵՐ (տող 1100 + տող 1200+տող 1300)	46 635,7	46 635,7	46 746,2	46 792,8	46 792,8	46 792,8
այդ թվում՝ 1. ՀԱՐԿԵՐ ԵՎ ՏՈՒՐՔԵՐ	11 315,3	11 315,3	11 42 5.8	11 472,4	11 472,4	11 472,4
այդ թվում՝ 1.1 Գույքային հարկեր անշարժ գույքից	6 080,2	6 080,2	6 080,2	6 080,2	6 080,2	6 080,2
այդ թվում՝ Գույքահարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող շենքերի և շինությունների համար	476,0	476,0	476,0	476,0	476,0	476,0
Հողի հարկ համայնքների վարչական տարածքներում գտնվող հողի համար	5 604,2	5 604,2	5 604,2	5 604,2	5 604,2	5 604,2
1.2 Գույքային հարկեր այլ գույքից	4 629,1	4 629,1	4 739,6	4 786,2	4 786,2	4 786,2
այդ թվում՝ Գույքահարկ փոխադրամիջոցների համար	4 629,1	4 629,1	4 739,6	4 786,2	4 786,2	4 786,2
1.3 Ապրանքների օգտագործման կամ գործունեության իրականացման թույլտվության վճարներ	606,0	606,0	606,0	606,0	606,0	606,0
այդ թվում՝ Տեղական տուրքեր	606,0	606,0	606,0	606,0	606,0	606,0
այդ թվում՝ ա) Համայնքի տարածքում նոր շենքերի, շինությունների (ներառյալ ոչ հիմնական) շինարարության (տեղադրման) թույլտվության համար						
որից՝ աա) Հիմնական շինությունների համար						
աբ) Ոչ հիմնական շինությունների համար						
բ) Համայնքի վարչ. տարածքում շենքերի, շինություն-ի, քաղաքաշինական այլ օբյեկտ-ի վերակառուցման, ուժեղացման, վերականգնման, արդիականացման աշխատանքներ (բացառ. ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ շինարարության թույլտվ. չպահանջվող դեպքերի) կատարելու թույլտվության համար						
գ) Համայնքի վարչական տարածքում շենքերի, շինությունների, քաղաքաշինական այլ օբյեկտների քանդման թույլտվության համար						
դ) Համայնքի տարածքում ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի վաճառքի, իսկ հանրային սննդի օբյեկտներում՝ ոգելից խմիչքների և (կամ) ծխախոտի արտադրանքի իրացման թույլտվության համար	76,0	76,0	76,0	76,0	76,0	76,0
ե) Համայնքի տարածքում բացօթյա վաճառք կազմակերպելու թույլտվության համար						
զ) Համայնքի տարածքում հեղուկ վառելիքի, սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի մանրածախ առևտրի կետերում հեղուկ վառելիքի և (կամ) սեղմված բնական կամ հեղուկացված նավթային գազերի և տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար	530,0	530,0	530,0	530,0	530,0	530,0

ե) Համայնքի տարածքում առևտրի, հանրային սննդի, զվարճանքի, շահումով խաղերի և վիճակախաղերի կազմակերպման օբյեկտները, բաղնիքները (սաունաները), խաղատները ժամը 24.00-ից հետո աշխատելու թույլտվության համար						
ը) Համաքաղաքային կանոններին համապատասխան երևան քաղաքի և քաղաքային համայնքների տարածքում ընտանի կենդանիներ պահելու թույլտվության համար						
թ) Համայնքի տարածքում արտաքին գովազդ տեղադրելու թույլտվության համար						
ժ) Համայնքի արխիվից փաստաթղթերի պատճեններ և կրկնօրինակներ տրամադրելու համար						
ժա) Համայնքի տարածքում (բացառությամբ թաղային համայնքների) մարդատար տաքսու (բացառությամբ երթուղային տաքսիների) ծառայություն իրականացնելու թույլտվության համար						
ժբ) Թանկարժեք մետաղներից պատրաստված իրերի մանրածախ առուվաճառքի թույլտվության համար						
ժգ) Ավտոկայանատեղի համար						
ժդ) Համայնքի տարածքում գտնվող խանութներում, կրպակներում տեխնիկական հեղուկների վաճառքի թույլտվության համար						
ժե) Համայնքի տարածքում հանրային սննդի կազմակերպման և իրացման թույլտվության համար						
ժզ) Հայաստանի Հանրապետության համայնքների անվանումները ֆիրմային անվանումներում օգտագործելու թույլտվության համար						
ժէ) Համայնքի տարածքում մասնավոր գերեզմանատան շահագործման թույլտվության համար						
ժը) Այլ տեղական տուրքեր						
1.4 Ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից այլ պարտադիր վճարներ						
այդ թվում՝ Համայնքի բյուջե վճարվող պետական տուրքեր						
այդ թվում՝ ա) Քաղաքացիական կացության ակտեր գրանցելու, դրանց մասին քաղաքացիներին կրկնակի վկայականներ, քաղաքացիական կացության ակտերում կատարված գրառումներում փոփոխություններ, լրացումներ, ուղղումներ կատարելու և վերականգնման կապակցությամբ վկայականներ տալու համար						
բ) Նոտարական գրասենյակների կողմից նոտարական ծառայություններ կատարելու, նոտարական կարգով վավերացված փաստաթղթերի կրկնօրինակներ տալու, նշված մարմինների կողմից գործարքների նախագծեր և դիմումներ կազմելու, փաստաթղթերի պատճեններ հանելու և դրանցից քաղվածքներ տալու համար						

1.5 Այլ հարկային եկամուտներ (տող 1161 + տող 1165)						
այդ թվում՝ պետական բյուջե ամրագրվող հարկերից և այլ պարտադիր վճարներից մասհանումներ համայնքների բյուջեներ	Օրենքով					
որից՝ եկամտահարկ	ա)					
բ) Շահութահարկ						
գ) Օրենքով պետական բյուջեին ամրագրվող այլ հարկերից և պարտադիր վճարներից կատարվող մասհանումները՝ յուրաքանչյուր տարվա պետական բյուջեի մասին օրենքով սահմանվող չափերով						
Հողի հարկի և գույքահարկի գծով համայնքի բյուջե վճարումների բնագավառում բացահայտված հարկային օրենսդրության խախտումների համար հարկատուներից գանձվող տույժեր և տուգանքներ, որոնք չեն հաշվարկվում այդ հարկերի գումարների նկատմամբ						
2. ՊԱՇՏՈՆԱԿԱՆ ԴՐԱՄԱՇՆՈՐՀՆԵՐ		31	31	31	31	31
		162,9	162,9	162,9	162,9	162,9
այդ թվում՝ 2.1 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից						
այդ թվում՝ մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով	Համայնքի բյուջե					
2.2 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետություններից						
այդ թվում՝ մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված այլ պետությունների տեղական ինքնակառավարման մարմիններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով	Համայնքի բյուջե					
2.3 Ընթացիկ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից						
այդ թվում՝ Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով						
2.4 Կապիտալ արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից						
այդ թվում՝ Համայնքի բյուջե մուտքագրվող արտաքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված միջազգային կազմակերպություններից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով						

2.5 Ընթացիկ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից	31 162,9	31 162,9	31 162,9	31 162,9	31 162,9	31 162,9
որից՝ բյուջեից ֆինանսական համահարթեցման սկզբունքով տրամադրվող դոտացիաներ	31 162,9	31 162,9	31 162,9	31 162,9	31 162,9	31 162,9
բ) Պետական բյուջեից տրամադրվող այլ դոտացիաներ (տող 1255 + տող 1256)						
այդ թվում՝ Համայնքի բյուջեի եկամուտները նվազեցնող՝ ՀՀ օրենքների կիրարկման արդյունքում համայնքի բյուջեի եկամուտների կորուստների պետության կողմից փոխհատուցվող գումարներ						
բբ) այլ դոտացիաներ						
գ) Պետական բյուջեից տրամադրվող նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)						
դ) ՀՀ այլ համայնքների բյուջեներից ընթացիկ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ						
2.6 Կապիտալ ներքին պաշտոնական դրամաշնորհներ՝ ստացված կառավարման այլ մակարդակներից (տող 1261 + տող 1262)						
այդ թվում՝ ա) Պետական բյուջեից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակային հատկացումներ (սուբվենցիաներ)						
բ) ՀՀ այլ համայնքներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման նպատակով ստացվող պաշտոնական դրամաշնորհներ						
3. ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏՆԵՐ	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5
այդ թվում՝ 3.1 Տոկոսներ						
այդ թվում՝ Օրենքով նախատեսված դեպքերում բանկերում համայնքի բյուջեի ժամանակավոր ազատ միջոցների տեղաբաշխումից և դեպոզիտներից ստացված տոկոսավճարներ						
3.2 Շահաբաժիններ						
այդ թվում՝ Բաժնետիրական ընկերություններում համայնքի մասնակցության դիմաց համայնքի բյուջե կատարվող մասհանումներ (շահաբաժիններ)						
3.3 Գույքի վարձակալությունից եկամուտներ	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5

այդ թվում՝ սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	Համայնքի					
Համայնքի վարչական տարածքում գտնվող պետական սեփականություն համարվող հողերի վարձակալության վարձավճարներ	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5	4 157,5
Համայնքի վարչական տարածքում գտնվող պետության և համայնքի սեփականությանը պատկանող հողամասերի կառուցապատման իրավունքի դիմաց գանձվող վարձավճարներ						
Այլ գույքի վարձակալությունից մուտքեր						
3.4 Համայնքի բյուջեի եկամուտներ ապրանքների մատակարարումից և ծառայությունների մատուցումից						
այդ թվում՝ Համայնքի սեփականություն հանդիսացող, այդ թվում՝ տիրագուրկ, համայնքին որպես սեփականություն անցած ապրանքների (բացառությամբ հիմնական միջոց, ոչ նյութական կամ բարձրարժեք ակտիվ հանդիսացող, ինչպես նաև համայնքի պահուստներում պահվող ապրանքանյութական արժեքների) վաճառքից մուտքեր						
Պետության կողմից տեղական ինքնակառավարման մարմիններին պատվիրակված լիազորությունների իրականացման ծախսերի ֆինանսավորման համար պետական բյուջեից ստացվող միջոցներ						
Օրենքով սահմանված դեպքերում համայնքային հիմնարկների կողմից առանց տեղական տուրքի գանձման մատուցվող ծառայությունների կամ կատարվող գործողությունների դիմաց ստացվող (գանձվող) այլ վճարներ						
3.5 Վարչական գանձումներ						
այդ թվում՝ Տեղական վճարներ						
Համայնքի վարչական տարածքում ինքնակամ կառուցված շենքերի, շինությունների օրինականացման համար վճարներ						
3.6 Մուտքեր տույժերից, տուգանքներից						
այդ թվում՝ իրավախախտումների համար տեղական ինքնակառավարման մարմինների կողմից պատասխանատվության միջոցների կիրառումից եկամուտներ	Վարչական					
Մուտքեր համայնքի բյուջեի նկատմամբ ստանձնած պայմանագրային պարտավորությունների չկատարման դիմաց գանձվող տույժերից						
3.7 Ընթացիկ ոչ պաշտոնական դրամաշնորհներ						

<p>այդ թվում՝ Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցների ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից</p>						
<p>Ֆիզիկական անձանց և կազմակերպությունների նվիրաբերությունից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցների ընթացիկ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից</p>						
<p>3.8 Կապիտալ ոչ պաշտոնական դրամաշնորհներ</p>						
<p>այդ թվում՝ Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի ֆինանսավորման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված արտաքին աղբյուրներից</p>						
<p>Նվիրատվության, ժառանգության իրավունքով ֆիզիկական անձանցից և կազմակերպություններից համայնքին, վերջինիս ենթակա բյուջետային հիմնարկների տնօրինմանն անցած գույքի (հիմնական միջոց կամ ոչ նյութական ակտիվ չհանդիսացող) իրացումից և դրամական միջոցներից կապիտալ ծախսերի իրականացման համար համայնքի բյուջե ստացված մուտքեր՝ տրամադրված ներքին աղբյուրներից</p>						
<p>3.9 Այլ եկամուտներ</p>						
<p>այդ թվում՝ Համայնքի գույքին պատճառած վնասների փոխհատուցումից մուտքեր</p>						
<p>Վարչական բյուջեի պահուստային ֆոնդից ֆոնդային բյուջե կատարվող հատկացումներից մուտքեր</p>						
<p>Օրենքով և իրավական այլ ակտերով սահմանված՝ համայնքի բյուջեի մուտքագրման ենթակա այլ եկամուտներ</p>						

ՀԱՄԱՅՆՔԻ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՑԱՆԿԻ ԿԱԶՄՈՒՄ ԵՎ ԱՌԱՋՆԱՀԵՐԹՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ, ՖԻՆԱՆՍԱՊԵՍ ԱՊԱՀՈՎՎԱԾ ԾՐԱԳՐԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ ԵՎ ԱՄՓՈՓՈՒՄ, ԼՐԱՑՈՒՑԻՉ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՀԱՅԹԱՅԹՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՄ

Ելնելով համայնքի իրավիճակի վերլուծության և գնահատման արդյունքներից, համայնքում ներկայումս արձանագրված հիմնախնդիրներից, համայնքի զարգացման՝ ՏԻՄ-ի կողմից ընտրված ռազմավարությունից և առաջիկա հինգ տարիների համար սահմանված հիմնական նպատակներից, ՀԶՀԾ-ի կառավարման ԲԱԽ-երի և ԽՄ-ի կողմից քննարկվել և որոշվել է առաջարկվող ծրագրերի ցանկը՝ ընդգրկելու համայնքի 2017-2021թթ. ՀԶՀԾ-ում: Այդ ծրագրերի մի մասի իրականացումը համարվում է տեղական ինքնակառավարման մարմինների լիազորություն, իսկ մյուս մասը դուրս է վերջիններիս լիազորությունների շրջանակից, սակայն դրանց իրականացումը խիստ կարևոր նշանակություն ունի բնակչության բարեկեցությունը և համայնքի համալիր ու առաջանցիկ զարգացումը ապահովելու համար:

ԲԱԽ-երի կողմից առաջարկվող ծրագրերի ցանկ՝ ՀԶՀԾ-ում ընդգրկելու համար

Աղյուսակ Պարտադիր իրականացվող ծրագրերի ցանկ

Հ/հ	Բնակավայրի անվանումը	Ծրագրի անվանումը	Ծրագրի ընդհանուր արժեքը (հազ. դրամ)
		<i>ՏԻՄ-երի լիազորություններ</i>	
1	Մայիսյանի համայնքապետարան	Կառավարման ապարատի պահպանում	91288,5, որից՝ 2017թ.՝ 18257.7 ¹ 2018թ.՝ 18257.7 2019թ.՝ 18257.7 2020թ.՝ 18257.7 2021թ.՝ 18257.7
2	Մայիսյանի համայնքապետարան)	Համայնքի ՆՈՒՀ ի պահպանում	35000.0, որից՝ 2016թ.՝ 7000.0 ² 2017թ.՝ 7000.0 2018թ.՝ 7000.0 2019թ.՝ 7000.0 2020թ.՝ 7000.0
3	Մայիսյանի	Մայիսյանի մշակույթի տան	18900.2, որից՝ 2016թ.՝ 3780,0 ³

¹Յուրաքանչյուր հաջորդ տարվա ծախսը հաշվարկվել է՝ իրատեսորեն հիմք ընդունելով երկրի ներկայիս իրավիճակը և ավելացումներ չեն կանխատեսվել

²Յուրաքանչյուր հաջորդ տարվա ծախսը հաշվարկվել է՝ իրատեսորեն հիմք ընդունելով երկրի ներկայիս իրավիճակը և ավելացումներ չեն կանխատեսվել

³Յուրաքանչյուր հաջորդ տարվա ծախսը հաշվարկվել է՝ իրատեսորեն հիմք ընդունելով երկրի ներկայիս իրավիճակը և ավելացումներ չեն կանխատեսվել

	համայնքապետարան)	պահպանում	2017թ.՝ 3780,0 2018թ.՝ 3780,0 2019թ.՝ 3780,0 2020թ.՝ 3780,0
4	Մայիսյանի համայնքապետարան	Բնակչությանը սոցիալական օգնության տրամադրում	20000.0, որից՝ 2016թ.՝ 4100,0 ⁴ 2017թ.՝ 4200,0 2018թ.՝ 4300,0 2019թ.՝ 4300,0 2020թ.՝ 4300,0
5	Մայիսյանի համայնքապետարան	Աղբահավաքման աշխատանքների իրականացում վարչական տարածքում)	16576.9, որից՝ 2017թ.՝ 1500,0 ⁵ 2018թ.՝ 2500.0 2019թ.՝ 2500.0 2020թ.՝ 2500.0 2021թ.՝ 2500.0
6	Մայիսյանի համայնքապետարան)	Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	24865,2, որից՝ 2017թ.՝ 4500,0 ⁶ 2018թ.՝ 4725.0 2019թ.՝ 4961,2 2020թ.՝ 5209,3 2021թ.՝ 5469,8

⁴Յուրաքանչյուր հաջորդ տարվա ծախսը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով կանխատեսվող գույքահարկից ավելացվող եկամուտը:

⁵Յուրաքանչյուր հաջորդ տարվա ծախսը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ծախսի գումարը և ավելացնելով 5 %-ի չափով (գների, աշխատավարձի նվազագույն մակարդակի և այլնի հնարավոր բարձրացումների հետևանքով առաջացող լրացուցիչ ծախսերը ներառելու համար)

⁶Յուրաքանչյուր հաջորդ տարվա ծախսը հաշվարկվել է՝ հիմք ընդունելով նախորդ տարվա ծախսի գումարը և ավելացնելով 5 %-ի չափով (գների, աշխատավարձի նվազագույն մակարդակի և այլնի հնարավոր բարձրացումների հետևանքով առաջացող լրացուցիչ ծախսերը ներառելու համար)

2.3. Համայնքում իրականացվող ծրագրերը

ՀԱՄԱՅՆՔԻ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԻՄՆԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

Վերացնել 1988 թ-ի երկրաշարժի հետևանքները, վերականգնել համայնքի սոցիալ-տնտեսական պայմանները, գյուղը դարձնել բարեկարգ և գրավիչ բնակավայր

ԿՈՄՈՒՆԻԿԱՅԻՈՆ ԽՆԴԻՐՆԵՐ

- Գազաֆիկացում 100%
- Անխափան ջրամատակարարման ապահովում,
- Ներհամայնքային բոլոր ճանապարհների բարեկարգում,
- Ջրահեռացման ապահովման նպատակով հեղեղատների պարբերաբար մաքրում,
- Կամուրջների վերանորոգում,
- Միջհամայնքային ճանապարհների բարեկարգում,
- Փողոցային լուսավորության վերակազմում
- Դպրոցի ջեռուցման համակարգի վերակազմում

ԿԱՌՈՒՑԱՊԱՏՈՒՄ

1. Մշակույթի տան տարածքի բարեկարգում,
2. Մշակույթի տան կտուրի մասնակի վերանորոգում
3. Մանկապարտեզի շենքի վերանորոգում,
4. Դպրոցի մարզադահլիճի վերակազմում
5. Մարզադաշտի կառուցապատում,
6. Գյուղի հասարակական կենտրոնի կառուցում,
7. Մանկական խաղահրապարակների կառուցում, խաղասարքերի տեղադրում,
8. Կանաչ գոտիների հիմնում,
9. Փոստի շենքի կառուցում,
10. Դպրոցի շենքի վերանորոգում:

ԱՐՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ

1. Կաթի ընդունման ու վերամշակման արտադրամասի կառուցում,

ԳՅՈՒՂԱՏՆԵՍՈՒԹՅՈՒՆ

1. Հակակարկտային ևս 2 կայանների տեղադրում
2. Տեխնիկական մշակաբույսերի ցանքատարածությունների ավելացում,

3. Պահեստային շինությունների կառուցում (վերանորոգում),
4. Ագրոքիմիական լաբորատորիայի վերականգնում
5. Գյուղատնտեսության զարգացման ինտենսիվ եղանակների խթանում:
6. Արդյունաբերական կենդանիների և թռչունների ներմուծում
7. Նոր գյուխտեխնիկայի ձեռք բերում

ԲՆԱԿԱՐԱՆԱՅԻՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Պետական բյուջեյի և հիփոտեքային ծրագրերի միջոցով հին ու կիսակառույց բնակարանների վերանորոգման ավարտում, նոր բնակելի տների կառուցում:

ՄՇԱԿՈՒՅԹ ԵՎ ՄՊՈՐՏ

1. Հայաստանի Հանրապետության տոների ու հիշատակի օրերին նվիրված միջոցառումների կազմակերպում,
2. Մշակույթի տան բարեկարգում,
3. Արվեստի գործիքների ձեռքբերում,
4. Նախակրթարանի վերանորոգում,
5. Մարզամշակութային կենտրոնի ստեղծում, գեղարվեստական խմբակների ստեղծում,
6. Գրքային ֆոնդի համալրում,
7. Մարզագույքի (նաև ձմեռային) ապահովում ,
8. Եկեղեցու տարածքի բարեկարգում
9. ՀՄՊ տարածքի բարեկարգում

ԲՆԱՊԱՀՊԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կենտրոնացված աղբահանության կազմակերպում,
2. Շինարարական աղբով լցված հեղեղատի տարածքի մաքրում,
3. Հողերի և արոտների արդյունավետ ու նպատակային օգտագործում,
4. Քարհանքների օգտագործված տարածքների վերականգնում:

ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԻ ԱՌԱՋՆԱՀԵՐԹ ԾՐԱԳՐԵՐԻ, ՀԵՌԱՆԿԱՐԱՅԻՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄ ԵՎ ԿՈՆԿՐԵՏ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՁԵՎԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳՐ 1

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԲՆԱԿԱՐԱՆԱՇԻՆՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

1988թ. երկրաշարժից հետո Մայիսյան համայնքի բազմաթիվ ընտանիքներ մնացին անօթևան: Ոմանք իրենք իրենց ուժերով լուծեցին անօթևանության խնդիրը, սակայն դեռ կան այնպիսիներ, որոնք բնակվում են վթարային ու ապրելու համար մի կերպ հարմարեցված կացարաններում:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Աջակցել համայնքի 14 երկրաշարժից անօթևան ընտանիքների անավարտ բնակարարաններ կառուցելու և կիսակառույցներն ավարտելու:

Խնդիր: 2017-2021թթ-ին 14 ընտանիքների կիսակառույց բնակարանները կառուցել և ավարտել համաձայն ՀՀ Կառավարության որոշման Աղետի գոտու վերականգման ծրագրի շրջանակներում:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Այդ բնակարանների շինարարության նախագծա-նախահաշվարկային աշխատանքները կատարելու է ՀՀ Շիրակի մարզպետարանը և ՀՀ քաղաքաշինության նախարարությունը: Ինչպես նաև ենթադրվում է հատկացնել ԲԳՎ-ներ, համապատասխան կադաստրային արժեքի, որն նույնպես իրականացնում են ՀՀ Շիրակի մարզպետարանը և ՀՀ քաղաքաշինության նախարարությունը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել պետբյուջեի միջոցներով մինչ 2021թ :

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Երկրաշարժից անօթևան մնացած 14 ընտանիքները կունենան սեփական ծածք և հնարավոր կլինի անցնել բարելավման հաջորդ ծրագրերին՝ վթարային և կիսակառույց անհատական բնակարանների վերանորոգմանը և նորաստեղծ ընտանիքներին բնակարաններով ապահովելը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Հակոբ Հունանյանը :

ԾՐԱԳԻՐ 2
ՄՇԱԿՈՒՅԹԻ ՏԱՆ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվում է ավարտին հասցնել մշակույթի տան տարածքի բարեկարգումը:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է շինությունը դարձնել օգտագործելի, ունենալ գրադարան, մշակութային միջոցառումների դահլիչ և հանդիսությունների սրահ: Մշակույթի տունը ծառայեցնել իր նպատակին, կազմակերպելով ազատ ժամանց ու միջոցառումներ:

Ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է լուծել մեկ խնդիր`

Մշակույթի տան տարածքը բարեկարգել , ստեղծել գեղեցիկ ու հաճելի կանաչ գոտի ծառ ու ծաղկով, բացօթյա նստարաններով , համայնքի բնակիչների համար հաճելի հանգստի գոտու ծառայելու :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ըստ նախնական հաշվարկների աշխատանքների լիակատար ավարտի համար անհրաժեշտ է մոտ 3.5 մլն. դրամ :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրագործել համայնքի բյուջեի և հովանավորների միջոցներով 2018 - 2020 թթ-ին :

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրագործման արդյունքում համայնքում կգործի մշակույթի տունը, որտեղ, գյուղի բնակչության համար կապահովվի նորմալ մշակութային և կենցաղային պայմաններ: Մշակույթի տունը բարեկարգումից ու գույքավորումից հետո լիարժեք կծառայի իր նպատակին և ամբողջ գյուղը հնարավորություն կունենա այնտեղ զբաղվել ու անցկացնել իրենց ազատ ժամանակը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱԽՄԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳԻՐ 3

ՄՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶԱԶԵՎԵՐԻ ՕՂԱԿՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ծրագրով նախատեսվում է համայնքային կենտրոնի ու գյուղապետարանի շենքի վերանորոգումից հետո, դրանք համալրել անհրաժեշտ գույքով: Ձեռք բերել անհրաժեշտ մարզագույք: 2018 թվականից նախատեսել սպորտհրահանգիչի հաստիքներ՝ սպորտյին միջոցառումներ կազմակերպելու նկատառումներով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ստեղծել համայնքում մարզաձևերի և մշակութային օղակներ, ունենալու առողջ, ֆիզիկապես կոփված, մշակութային կյանքին տեղյակ արվեստասեր սերունդ և բնակչություն: Հնարարավորության դեպքում դառնալ տարածաշրջանի կենտրոն, ներառելով շրջակա գյուղերը:

Խնդիր 1. Ներդրում կատարել համայնքի կողմից և միջոցներ հայթհայթել ագրոքիմիական լաբորատորիայի շենքի վերանորոգման և համապատասխան գույք ձեռք բերելու համար:

Խնդիր 2. Ներգրավել մարզիչներ և մշակութային մասնագետներ համապատասխան օղակների համար և գումարներ հատկացնել այդ մարզամշակութային օղակները աշխատելու և շենքի պահպանության համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ

ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի ֆինանսական միջոցները շինարարության համար գնահատվում են մոտ 45.0 մլն. դրամ: Ծրագիրն նախատեսվում է իրականացնել արտաքին ֆինանսական աղբյուրներով: Այլ աղբյուր գտնելու դեպքում, համայնքը պատրաստ է ներդրում կատարել 15.0 մլն դրամ և տանել հետագա պահպանման ծախսերը:

ՄՊԱՄՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքը կունենա հարմարավետ ու կահավորված մարզամշակույթային կենտրոն, սեփական գյուղապետարանի շենք, քարաշեն գրադարան՝ գրքային ֆոնդով ապահովված, համայնքի մարզիկների պահանջներին մասնակի բավարարող մարզագույք:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՅՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳԻՐ 4

ՆԵՐՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ներհամայնքային ճանապարհները վերածվել են ջրատար փոսերի, տարվա որոշ եղանակներին դարձնելով նրանց անանցանելի: Ծրագրով նախատեսվում է բարեկարգել ներհամայնքային 19 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ, (ճանապարհի խճալցում, ավազալցում, ճանապարհի հարթեցում):

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է նորոգել ու բարեկարգել ներհամայնքային հիմնական ճանապարհները և առաջնահերտ հարթեցման կարիք ունեցող փողոցները, որի իրագործման համար անհրաժեշտ է լուծում տալ մի քանի խնդիրների..

Խնդիր 1. Կազմել նախագծա-նախահաշվային փաստաթղթեր ըստ առանձին փողոցների.

Խնդիր 2. 2017-2021թ.թ. համայնքային բյուջեով ֆինանսական միջոցներ նախատեսել ծրագրի իրականացման համար.

Խնդիր 3. Ներգրավել շինարարական կազմակերպություններ այդ աշխատանքները կատարելու համար:

Խնդիր 4. Խճալցնել ու ավազալցնել 19 կմ ճանապարհ ու հարթեցնել:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների, չափազրման ու հաշվարկի արդյունքներում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են տարեկան 1.8 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրագործումը պահանջում է ամենամյա խնամք, որպեսզի փողոցները լինեն միշտ անցանելի: 2017-2018թթ նախատեսվում է հարթեցնել ճանապարհների առավել բանուկ հատվածները:

2018-21թթ.-ին նախատեսվում է հարթեցնել համայնքային ճանապարհների ծայրամասային հատվածները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծումն ու աշխատանքների կազմակերպումը իրականացնելու է համայնքի ղեկավարի տեղակալը:

Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքը կունենա բարեկարգ փողոցներ, խճապատված ու ջրահեռացումը ապահովված, բավարար երթևեկության պայմաններով տարվա բոլոր եղանակներին:

ԾՐԱԳԻՐ 5

ԴԱՇՏԱՄԻՋՅԱՆ ՃԱՆԱՊԱՐՀՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Դաշտամիջյան ճանապարհները վերածվել են ջրատար փոսերի, տարվա որոշ եղանակներին դարձնելով նրանց անանցանելի: Ծրագրով նախատեսվում է բարեկարգել դաշտամիջյան 11 կմ ընդհանուր երկարությամբ ճանապարհ, (ճանապարհի խճալցում, ավազալցում, ճանապարհի հարթեցում):

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿԸ

Ծրագրի նպատակն է նորոգել ու բարեկարգել դաշտամիջյան հիմնական ճանապարհները և առաջնահերտ հարթեցման կարիք ունեցող փողոցները, որի իրագործման համար անհրաժեշտ է լուծում տալ մի քանի խնդիրների..

Խնդիր 1. 2017-2021թ.թ. համայնքային բյուջեով ֆինանսական միջոցներ նախատեսել ծրագրի իրականացման համար.

Խնդիր 2. Ներգրավել շինարարական կազմակերպություններ այդ աշխատանքները կատարելու համար:

Խնդիր 3. Խճալցնել ու ավազալցնել 11 կմ ճանապարհ ու հարթեցնել:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախկինում կատարված նմանատիպ աշխատանքների, չափագրման ու հաշվարկի արդյունքներում ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են տարեկան 1.0 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրագործումը պահանջում է ամենամյա խնամք, որպեսզի ճանապարհները լինեն միշտ անցանելի : 2017-2018թթ նախատեսվում է հարթեցնել ճանապարհների առավել բանուկ հատվածները: 2018-21թթ.-ին նախատեսվում է հարթեցնել դաշտամիջյան ճանապարհների ծայրամասային հատվածները :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՊԱՏԱԽՍԱՆԱՏՈՒՆ

Ծրագրի իրականացման հետ կապված խնդիրների լուծումն ու աշխատանքների կազմակերպումը իրականացնելու է համայնքի ղեկավարի տեղակալը:

Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԻՑ ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացմամբ համայնքը կունենա բարեկարգ ճանապարհներ, խճապատված ու ջրահեռացումը ապահովված, բավարար երթևեկության պայմաններով տարվա բոլոր եղանակներին :

ԾՐԱԳԻՐ 6

ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՍՈՑԻԱԼ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԻ ԲԱՐԵԼԱՎՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Գյուղատնտեսությունից ստացված եկամուտը, այսօր բավարար համարել չի կարելի: Բնակիչների դրամական միջոցները հիմնականում գոյանում են թռչակներց, ընտանեկան նպաստներից (ընտանեկան նպաստներից օգտվողների թիվը շատ քիչ է) և գյուղմթերքների վաճառքից: Սակայն այդ գումարները այնքան քիչ են, որ բնակիչները մի կերպ ծայրը- ծայրին են հասցնում միայն իրենց ընտանիքների առաջին հերթի կարիքները հոգալու:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Թեթևացնել բնակչության կենցաղային հոգսերը:

Խնդիր 1. Մշտապես հոգ տանել ծայրահեղ աղքատ և խիստ կարիքավոր ընտանիքների մասին, ցույց տալ ֆինանսական և նյութական օգնություն:

Խնդիր 2. Աջակցել սոցիալական ծառայությանը կարիքավոր ընտանիքների ընդգրկելով պետական սոցիալական օգնության ծրագրերի մեջ:

Խնդիր 3. Համայնքում բնակչության աճի զարգացման համար յուրաքանչյուր նորածին երեխայի համար նախատեսել որոշակի գումար :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ, ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆ

ՈՒ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Այս նպատակների իրականացման համար յուրաքանչյուր տարի համայնքի բյուջեում նախատեսել 3000000-ից 4000000 դրամ:

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ուշադրության կարժանան հիվանդներն ու ծերերը այլ սոցիալապես անապահով ընտանիքները:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի աշխատակազմի քարտուղար Հակոբ Հունանյանը:

ԾՐԱԳԻՐ 7

**ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՄԵԾ ՊԱՏԵՐԱԶՍՈՒՄ ԶՈՀՎԱԾ ՀԱՄԱԳՅՈՒՂԱՑԻՆԵՐԻ
ՀԻՇԱՏԱԿԻՆ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԱՐԱԾՔԻ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ ԵՎ
ԵԶՐԱՄԱՅԹԵՐԻ ԿԱՌՈՒՑՈՒՄ**

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Վերանորոգել հուշարձանը, թարմացնել ներքին եզրամայթերն ու սալարկել հետիոտն մասը, վերանորոգել ցայտաղբյուրը, ընդարձակել և թարմացնել ծաղկանոցները (150 քմ):

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի իրագործումը նպատակ է հետապնդում՝

1. Յուրաքանչյուր տարի բնակչության հետ կազմակերպել հասարակական աշխատանքներ հուշարձանի ընթացիկ խնամքի և մաքրության ապահովման համար
2. Վերանորոգել ու բարեկարգել ՀՄՊ զոհվածների հիշատակին կառուցված հուշարձանը կից տարածքով.
3. Համայնքում ունենալ տեսարժան վայր.
4. Բարեկարգել տարածքը, որից
 - 300 գծմ եզրամայթերի բարեկարգում ու սալարկում,
 - Ցայտաղբյուրի վերանորոգում,
 - Ծաղկանոցների (50 քմ) կառուցում:
 - Նստարանների տեղադրում

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ՈՒ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐԸ

Ծրագրի իրականացման անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 2 մլն դրամ: Իսկ ընթացիկ խնամքի համար բյուջեից անհրաժեշտ է յուրաքանչյուր տարի հատկացնել 0.8-0.9 մլն դրամ:

Ծրագրի իրականացման ֆինանսավորումը կատարվելու է համայնքային բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ամենամյա ընթացիկ բարեկարգման աշխատանքները նախատեսվում է կատարել մինչև յուրաքանչյուր տարվա մայիսի 9-ը: Ծրագրի կատարման ժամկետ է սահմանվում 2020 թ.

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՈՒՄԸ

Ծրագրի իրականացնողն ու վերահսկիչը համայնքի ղեկավարն է: Ծրագրի ֆինանսական կատարման պատասխանատուն՝ համայնքի ղեկավարի աշխատակազմի I-ին կարգի մասնագետ Լարիսա Գևորգյանը:

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔԸ

Ծրագրի իրագործմամբ համայնքի այս հասարակական կենտրոնի 800 քմ տարածք կդառնա բարեկարգ ու կանաչապատ գոտի:

Տարածքի կառուցապատումը կապիտալ շինության տեսքով է ու մնայուն, որն իր կառույցով ու ծաղկանոցով, ապագայում կօգտագործվի որպես ներկայանալի վայր:

Համայնքը կունենա վերանորոգված ու խնամված հուշարձան:

ԾՐԱԳԻՐ 8
ԳՅՈՒՂԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԽՆԱՍՔ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագրով նախատեսվում է հնադարյան եկեղեցու ու նրան կից միջնադարյան գերեզմանոցի խնամք և լուսավորություն:

Եկեղեցու համար արդեն ձեռք է բերվել որոշակի ծիսակատարման պարագաներ և գույք, այդ իսկ պատճառով անհրաժեշտ է համալրել այն, նպաստելով դրանով համայնքի հոգևոր կյանքին: Բնակչությանը պետք է կապել հոգևոր կյանքի հետ, երիտասարդներին տալ գիտելիքներ Հայաստանի պատմության, մշակույթի վերաբերյալ և սերմել բարոյականություն Հայ Առաքելական եկեղեցու չափանիշներով:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Խնդիր 1. Համագործակցել Հայ Առաքելական եկեղեցու Ախուրյանի թեմի հետ, աջակցելով կազմակերպելու եկեղեցական պատարագներ և ծիսակատարություններ:

Խնդիր 2. 2018թ. հատկացնել միջոցներ գյուղի եկեղեցուն օդափոխանակիչ տաքացուցիչների տեղադրման համար:

Խնդիր 3. Նստարանների տեղադրում:

Խնդիր 4. Տարածքի բարեկարգում

Խնդիր 5. Էլեկտրականության ապահովում

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար պահանջվում է 500 հազ. դրամ տարեկան:

Ծրագիրը կատարվելու է տեղական բյուջեի և հովանավորների միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը իրագործել 2017-2021թթ. հունիս-դեկտեմբեր ամիսներին :

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Ծրագրի իրականացումով կունենանք լուսավորված եկեղեցի և նրան հարող տարածք, որը կնպաստի հարմար ծիսակատարություններին:

ԾՐԱԳՐԻ ԲՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳԻՐ 9

ՈՌՈԳՄԱՆ ՑԱՆՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Ոռոգման հողային հունի փոխարինումը ե/բ կիսախողովակներով կնպաստի ոռոգման ջրի արդյունավետ օգտագործմանը, որը զգալի չափով կկանխի հաճախակի կրկնվող երաշտի, կարկտահարությունների հետևանքով անասնակերի գների բաձրացմանը, անասնազլիաքանակի կրճատմանը, հնարավորություն կտա բնակչությանը մշակել նոր մշակաբույսեր, մշակել ոռոգման ջրի պատճառով չմշակվող հողատարածությունները: Հողերի չմշակումը հանգեցնում է բնակչության աղքատացմանը: Եթե կառուցվի 3 կմ երկարությամբ ոռոգման ցանց, ապա կոռոգվի 180-200 հա հողատարածություն:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Բնակչությանը նորմալ ոռոգման ջրի մատակարարում և կորուստների կրճատում, հողագործության զարգացում, պարենային խնդիրների լուծում:

Խնդիր 1. Միջնորդել և աջակցել համայնքին ոռոգման ջրով ապահովող ձեռնարկությանը վերանորոգելու ոռոգման ջրի մաշված և վթարային ջրագծերը և այն պլանավորել այնպես, որ 2017-2021թթ-ին վերանորոգվի ամբողջությամբ:

Խնդիր 2. Կապեր հաստատել ներդրող, բարեգործական և այլ դոնոր կազմակերպությունների և ծրագրերի հետ համայնքի ոռոգման ցանցը մինչև 2018թ. ներհամայնքային ` տնամերձ հողամասերի վերանորոգման և ոռոգման ցանցն ընդլայնելու համար:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

ԵՎ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Համայնքի կողմից միջոցներ հատկացնել մասնակի ներդրումներ կատարելու համար մինչև 15-20% չափով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել մինչև 2016 թվականը:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳՐԻՑ ՍՊԱՍՏՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

185 ընտանիք կապահովվի ոռոգման ջրով, կկանխվի ոռոգման ջրի կորուստների 40%, մշակվող գյուղմթերքների արտադրությունը կավելանա շուրջ 30%-ով, կզարգանա գյուղատնտեսությունը:

ԾՐԱԳԻՐ 10

ԳԵՐԵԶՄԱՆՈՑԻ ԽՆԱՍՔ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ծրագիրը նախատեսում է սպասարկման աշխատանքներ տանել գյուղի գործող գերեզմանոցի նկատմամբ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է ունենալ խնամված գերեզմանոց:

Ծրագրի խնդիրներն են.

Խնդիր 1. 2019-2021թթ. Գիշերային լուսավորվածություն անցկացնել գերեզմանոցում:

Խնդիր 2. Մինչև 2021թ. գերեզմանոցում ունենալ սպասարկող անձնակազմ, ծխակատարման պարագաներ, ապահովել պահպանություն և մաքրություն:.

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Նախնական հաշվարկներով ծրագրի իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները գնահատվում են 0.7 մլն դրամ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել համայնքային բյուջեի միջոցներով 2015-2016 թթ. ընթացքում:

ՄՊԱՄՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Գերեզմանոցը կղաղարի օարոտատեղի՝ լինենուց, կբացառվեն անհարգի վնասները, կլինեն մաքուր և լուսավորված:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳԻՐ 11

ԳՅՈՒՂԻ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԳԻՇԵՐԱՅԻՆ ԼՈՒՄԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԱՆՑԿԱՅՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվում է գյուղի կենտրոնական փողոցների գիշերային լուսավորության համար տեղադրել լամպերի 30 կետեր, որոնք կապահովեն գիշերային ժամերի անհրաժեշտ լուսավորությունը :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագիրը նպատակ է հետապնդում համայնքում գիշերային ժամերին ունենալ անհրաժեշտ փողոցային լուսավորություն: Ծրագրի կատարման համար լուծում են պահանջում հետևյալ խնդիրները.

Խնդիր 1. Էլեկտրասյուների վրայով անցկացնել առանձին լուսավորության հաղորդալար.

Խնդիր 2. Մոնտաժել լուսավորության լամպերն ու տեղադրել ավտոմատ լուսառեկ-անջատիչ ու ժամային հաշվիչ:

Խնդիր 3. Գիշերային լուսավորություն համար տեղադրել էկոնոմ լամպեր:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ

Ծրագրի արժողությունը տարեկան 900-1200 հազ. դրամ է, որը իրականացվելու է համայնքի միջոցներով, որից` 2017թ. համար 900 հազ. դրամ լուսավորության սարքեր, հաղորդալար, հաշվիչ և այլն ձեռք բերելու համար և 200 հազ.դրամ էլեկտրաէներգիայի վարձի համար: Հաջորդ տարիներին այդ համամասնությունը փոփոխվում են:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագրի իրականացվելու է 2017-2021թթ. ընթացքում, որից 10 կետ 2017թ. և 20 կետ 2018-2021թ.թ. ընթացքում :

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի կենտրոնական փողոցները կդառնան լուսավոր, գիշերային ժամերին հետիոտնի համար հնարավորություն կստեղծվի ազատ տեղաշարժվելու:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրը իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկողությամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավարի Հակոբ Բաղդասարյան:

ԾՐԱԳԻՐ 12

ՀԱՄԱՅՆՔԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

ՈՒՂԵՎՈՐՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄՊԱՍԱՍՐԱՀՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Սպասարանի կառուցումը անհրաժեշտություն է, փոխադրամիջոցի սպասելիս ուղևորներին արևից, քամուց ու տեղումներից պատսպարվելու համար:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է Կանգառում սպասողների համար ստեղծել հարմարավետ պայմաններ: Ծրագրի իրականացման համար կա մեկ խնդիր՝

Խնդիր. Պատվիրել 2 □Սպասարան□ պատրաստի կոնստրուկցիան ու տեղադրել:

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ծրագիրը գնահատվում է 0.9 մլն դրամ: Նախատեսվում է իրագործել տեղական բյուջեի միջոցներով:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2019-2021թթ. :

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Կանգառում սպասողները հնարավորություն կունենան պատսպարվել արևից, քամուց ու տեղումներից:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳԻՐ 13

**ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԲՆԱԿԱՆ ԱՂԵՏՆԵՐԻՑ ` ԿԱՐԿՏԻՑ ,
ՑԱՆՔԱՏԱՐԱԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ**

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Մշտապես տուժվող ցանքատարածությունների պաշտպանությունը բնական ամենավտանգավոր աղետից ` կարկտից , և ցանքատարածությունների ավելացման համար :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Ծրագրի նպատակն է համայնքի բնակիչների մոտ ստեղծել ցանքերի պաշտպանված լինելու երաշխիք և ապահովել անկորուստ, բարձր բերքատվություն :

Խնդիր 1. Պատվիրել համապատասխան կազմակերպությանը տեխնիկապես ավելի լավ բնութագրերով կայանքների պարաստում և տեղադրում :

Խնդիր 2. Ապահովել նոր կայանքի համար ֆինանսական միջոցներ :

Խնդիր 3. Հակակարկտային կայանքների սպասարկյալ ծառայությունների վճարման ապահովում :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Ծրագիրը գնահատվում է 10.0 մլն դրամ: Նախատեսվում է իրագործել տեղական բյուջեի միջոցներով և տարեկան սպասարկաման վճար ` 1.2 մլն. դրամ :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017-2018թ;

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի բնակիչների մոտ ստեղծել ցանքերի պաշտպանված լինելու երաշխիք և ապահովել անկորուստ, բարձր բերքատվություն :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳԻՐ 14

ՄԱՐԶԱՄՇԱԿՈՒՅԹԱՅԻՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Համայնքում երկրաշարժից հետո խաթարված մարզամշակույթային կյանքի վերականգնում և զարգացում :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքի բնակիչների համար ստեղծել հետաքրքիր և հաճելի մարզամշակույթային ժամանց :

Խնդիր 1. Մշակույթի տանը հայոց մեծերի մեծարման և նրանց ստեղծագործություններին ծանոթացման միջոցառումներ :

Խնդիր 2. Տոնական միջոցառումների կազմակերպում :

Խնդիր 3. Գեղարվեստաթատերական խմբակների ստեղծում :

Խնդիր 4. Երաժշտական գործիքների և աուդիո համակարգերի ձեռք բերում :

Խնդիր 5. Մշակույթի տան բարեկարգում և մշակույթի տան բեմի կուլիսների ձեռք բերում :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Խնդիր 1 –ի համար ` 2017-2021թթ. տարեկան 0.3 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե :

Խնդիր 2 –ի համար ` 2017-2021թթ. 0.8 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե :

Խնդիր 3 –ի համար ` 2018 թվական 0.3 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , համագյուղացիներ :

Խնդիր 4 –ի համար ` 2017-2021թթ. 1.0 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , մշակույթի նախարարություն :

Խնդիր 5 –ի համար ` 2017-2021թթ. 4.0 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , պետ. բյուջե :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017-2021թթ. :

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքի բոլոր տարիքի բնակիչներին լիարժեք հանգիստ և հետաքրքրությունների ապահովում :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳԻՐ 15

ՄԱՅԻՍՅԱՆԻ ՄԻՋՆԱԿԱՐԳ ԴՊՐՈՑԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Նախատեսվում է գյուղի միջնակարգ դպրոցի շենքի արտաքին տեսքի ` պատերի և կտուրի վերանորոգում , մարզադահլիճի վարականգնում , ջեռուցման լոկալ ցանցի համակարգի ստեղծում : Երկրաշարժից հետո դպրոցի շենքի վերանորոգում տեղի չի ունեցել , քայքայվել են պատերի արտաքին շերտերի ձեփաշերտերը , մարզադահլիճի փայտյա հատակը փտել և քայքայվել է , ջեռուցումը կատարվում էր կից կաթսայատան շնորհիվ, որը այժմ հնարավոր չէ շահագործել ` թե ֆիզիկապես, թե ֆինանսապես :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Համայնքում ունենալ լավ կազմակերպված կրթության գործընթաց , մեծացնել մտավոր և ֆիզիկապես առողջ սերունդ :

Խնդիր 1. Պատերի ձեփաշերտի և կտուրի վնասված հատվածների վերանորոգում :

Խնդիր 2. Դպրոցի մարզադահլիճի հատակի վերականգնում, մարզագույքի թարմացում :

Խնդիր 3 Դասագրքերի արժեքի փոխհատուցում :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Խնդիր 1 –ի համար ` 2018 թվականից 4.0 մլն դրամ , ֆինանսավորումներ ` պետ. բյուջե :

Խնդիր 2 –ի համար ` 2018 թվականից 3.5 մլն դրամ , ֆինանսավորումներ ` պետ. բյուջե :

Խնդիր 3 –ի համար ` 2017-2021թթ. 0.65 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , հովանավորներ :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018-2021թթ. :

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքում ունենալ լավ կազմակերպված կրթության գործընթաց , մեծացնել մտավոր և ֆիզիկապես առողջ սերունդ , նպաստել աշակերտների թվի աճ :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի և դպրոցի տնօրինության ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը և դպրոցի տնօրեն Վարդան Կարախանյանը:

ԾՐԱԳԻՐ 16

ՄԱՅԻՍՅԱՆԻ ՄԱՆԿԱՊԱՐՏԵՁԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Շենքի արտաքին տեսքի ` պատերի և կտուրի վերանորոգում , ջեռուցման լոկալ ցանցի համակարգի ստեղծում, սանհանգույցների վերանորոգում, բակային խաղահրապարակի ստեղծում : Հաշվի առնելով շենքի վատթար վիճակը , ցանկանում ենք կատարել հիմնական վերանորոգում :

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախատեսվում է գյուղի նախադպրոցական տարիքի երեխաների հանգստի և կրթության բարձր մակարդակի ապահովում:

Խնդիր 1. Պատերի և կտուրի վնասված հատվածների վերանորոգում :

Խնդիր 2. Խաղահրապարակի համար գույքի ձեռք բերում և տեղադրում :

Խնդիր 3. Ստեղծել ջեռուցման լոկալ համակարգ առանց ծախսատար հին կաթսայատան :

Խնդիր 4. Նկուղի վերանորոգում` պատեր և պատուհաններ :

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Խնդիր 1 –ի համար ` 2018 թվականից 3.0 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , հովանավորներ :

Խնդիր 2 –ի համար ` 2018 թվականից 2.0 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , հովանավորներ :

Խնդիր 3 –ի համար ` 2018-2021թթ. 2.5 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , հովանավորներ :

Խնդիր 4 –ի համար ` 2019-2021թթ. 1.5 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , հովանավորներ :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2018թ-2021թ. :

ՄՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքում ունենալ նախադպրոցական տարիքի առողջ , կրթված և դաստիարակված սերունդ :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի և դպրոցի տնօրինության ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը և Մայիսյանի մանկապարտեզ ՀՈԱԿ-ի տնօրեն Արզիմա Բաղդասարյանը :

ԾՐԱԳԻՐ 17

ԱՂԲԱՀԱՆՈՒԹՅՈՒՆ

ԾՐԱԳՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄԸ

Ներկայումս Մայիսյանի համայնքում մասամբ իրականացվում է աղբահանություն, սակայն չունենալով համապատասխան աղբամաններ և աղբահավաք մեքենա, հնարավոր չի լինում աղբահանությունը կազմակերպել կենտրոնացված, հավաքված աղբը տեղակայվում է հարակից ձորակներում, որն էլ պատճառում է բազմաթիվ տհաճություններ և հետագայում կարող է առաջացնել համաճարակներ:

ԾՐԱԳՐԻ ՆՊԱՏԱԿՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Նախատեսում է գյուղի տարածքու տեղադրել աղբամաններ և կազմակերպել կենտրոնացված աղբահանություն

- Խնդիր 1. Ձեռք բերել աղբամաններ
- Խնդիր 2. Ստեղծել աղբամանների տեղադրման համար հարմար տարածքներ
- Խնդիր 3. Կազմակերպել կենտրոնացված աղբահանություն
- Խնդիր 4. Ստեղծել համայնքային աղբավայր
- Խնդիր 5. Աղբի ծածկումը հողով

ԾՐԱԳՐԻ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԵՎ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ

Խնդիր 1 –ի համար ` 2017թվականից 1.0 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե, հովանավորներ :

Խնդիր 2 –ի համար ` 2017 թվականից 0.5 մլն դրամ, ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե,:

Խնդիր 3 –ի համար ` 2017-2021թթ. 2.5 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , հովանավորներ :

Խնդիր 4 –ի համար ` 2018-2021թթ. 1.0 մլն դրամ , ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , հովանավորներ:

Խնդիր 5–ի համար ` 2017-2021թթ. 0.5 մլն դրամ տարեկան, ֆինանսավորումներ ` համայնքային բյուջե , հովանավորներ:

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏՆԵՐԸ

Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ-2021թ. :

ՍՊԱՍՎՈՂ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Համայնքում ունենալ մաքուր տարածք հեղեղատներ :

ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՆՈՂՆ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒՆ

Ծրագիրն իրականացվելու է համայնքի ղեկավարի աշխատակազմի ղեկավարությամբ ու վերահսկմամբ: Ծրագրի իրականացման պատասխանատուն է համայնքի ղեկավար Հակոբ Բաղդասարյանը:

ԾՐԱԳՐԵՐԻ ԱՄՓՈՓ ՏԵՂԵԿԱԳԻՐ

Հ/Հ	Ծրագրի անվանումը	Ծրագրի ֆինանսական գնահատումը ըստ ժամ կետների (մլն դր.) 2017թ								
			2018	2019	2020	2021	Ընդամենը, որից՝ համ. բյուջե			
								ներգրավվող միջոց	Ընդամենը	
1	2	3	4	5	6	7	8	9	10	
1.	Երկրաշարժից 14 անօթևան ընտանիքների բնակարանով ապահովում	Պետբյուջեից «Աղետի գոտու վերացման ծրագրի» շրջանակներում								
2.	Մշակույթի տան տարածքի բարեկարգում		1.5	1.0	1.0			3.5	3.5	
3.	Սպորտային մարզ մշակութային օղակների կազմակերպում		Պետբյուջեից					1.5	43.5	45.0
4.	Ներհամայնքային ճանապարհների բարեկարգում	1.8	1.8	1.8	1.8	1.8	9.0		9.0	
5.	Գաշտամիջյան ճանապարհների վերանորոգում	1.0	1.0	1.0	1.0	1.0	5.0		5.0	
6.	Բնակչության սոցիալ-տնտեսական պայմանների բարելավում	3.0-4.0	3.0-4.0	3.0-4.0	3.0-4.0	3.0-4.0	15.0-20.0		15.0-20.0	
7.	ՀՄՊ գոիվածների հուշարձանի պահպանում	0.8	0.8	1.8	1.8	0.9	6.1	1.0	7.1	
8.	Գյուղի եկեղեցու խնամք	0.5	0.5	0.5	0.1	0.1	1.7		1.7	

9.	Ոռոգման ցանցի վերանորոգում	Գնորդներից							
		Համայնքը պատրաստ է ներդրում կատարել 15-20 %							
10.	Գերեզմանոցի խնամք			0.2	0.35	0.35	0.9		0.9
11.	Գիշերային լուսավորվածություն	1.2	1.2	1.2	1.2	1.2	6.0		6.0
12.	Կենտրոնական ճանապարհին սպասարանների կառուցում	0.5	0.5	0.5		0	1.5		1.5
13.	Համայնքում բնական աղետներից՝ կարկտից, ցանքատարածությունների պաշտպանության ապահովում	6.0	6.0	1.2	1.2	1.2	15.6		15.6
14.	Մարզամշակույթային միջոցառումներ	0.5	0.5	4.3	3.0	2.4	10.7	3.9-4.6	15.2
15.	Մայիսյանի միջնակարգ դպրոցի վերանորոգում	0.65	0.65	3.15	3.15	0.65	8.25	9.5	17.75
16.	Մայիսյանի մանկապարտեզի վերանորոգում և բարեկարգում		2.5	3.0	1.5	2.0	9.0	6.0	15.0
17.	Աղբահանություն	1.5	2.5	2.5	2.5	2.5	11.5	0	11.5